8891

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«08» 08 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 155-24

Նախաձեռնող՝ *«ԷԼԻՏԱՐ ՇԻՆ» ՍՊԸ*
ք.Երևան, Դավթաշեն 2-րդ թաղ.34/2

Գործունեությունը՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 17-րդ փողոցի թիվ 6/6 հասցեի հողամասում բազմաբնակարան շենքերի կառուցման նախագծի փոփոխություն
Կոտայքի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 155-24

«08» 08 2024թ.

Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 17-րդ փողոցի թիվ 6/6 հասցեի հողամասում բազմաբնակարան շենքերի կառուցման նախագծի փոփոխության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԷԼԻՏԱՐ ՇԻՆ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծի փոփոխություն /Բ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ, Ջրվեժ համայնք, Ջրվեժ բնակավայր

Ներածական մաս. Նախատեսվում է իրականացնել Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 17-րդ փ., թիվ 6/6 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքերի հարկայնության փոփոխություն:

Շրջակա միջավայրի նախարարության կողմից, 2023 թվականի մարտի 23-ին, «ԷԼԻՏԱՐ ՇԻՆ» ՍՊԸ-ի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 17-րդ փողոցի թիվ 6/6 հասցեի հողամասում բազմաբնակարան շենքերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվել է ԲՓ №0047-23 փորձաքննական դրական եզրակացություն: Փորձաքննության ներկայացված նախատեսվող գործունեությունը հանդիսանում է վերոնշյալ նախատեսվող գործունեության փոփոխությունը:

Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 8-րդ մասի, այն է՝ 18-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով նախատեսված դեպքում գնահատման և փորձաքննության ենթակա են 12-րդ հոդվածում թվարկված նախատեսվող գործունեության տեսակների ընդլայնումը կամ վերակառուցումը կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինումը կամ վերապրոֆիլավորումը կամ կոնսերվացումը կամ տեղափոխումը կամ դադարումը կամ փակումը կամ քանդումը կամ նախագծային փոփոխությունը:

Նկարագրական մաս. Նախագծի փոփոխության համար հիմք են հանդիսացել 2022 թվականի հոկտեմբերի 21-ին (փոփոխված համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 22-ի) Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի կողմից տրված (N 261) նախագծման թույլտվությունն ու 2023 թվականի նոյեմբերի 30-ին տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման N30112023-07--0139 վկայականը:

Տարածքի մակերեսը հարթ է, առկա է պարիսպ և անավարտ շինություն: Տարածքի բացարձակ նիշերի տարբերությունը տատանվում է 1384.0-1386.0 մ սահմաններում:

Նախատեսվող գործունեության տարածքը տրանսպորտային մոտեցմամբ հարում է համայնքային ճանապարհին: Նախագծվող տարածքով անցնող ենթակառուցվածքներ, այդ թվում ստորգետնյա՝ առկա չեն:

Նախատեսվող համալիրը բաղկացած կլինի 9-15 վերգետնյա և 2 ստորգետնյա 3 մասնաշենքերից: Նախագծային փոփոխությամբ նախատեսվում է ներկայիս 7-14 հարկերի փոխարեն՝ հարկերի ավելացմամբ կառուցել 9-15 հարկեր առանց արտաքին և ներքին չափերի փոփոխության:

-Հողամասի ընդհանուր մակերեսը՝ 6176 մ^2,

-կառուցապատման մակերեսը՝ 2275.0 մ^2,

-կանաչապատման մակերեսը՝ 2480 մ^2,

-գեոցանցով ճանապարհն և անցուղիները՝ 1421,3 քմ,

-ավտոկայանատեղիների կառուցապատման մակերեսը՝ 3640x2=7280 մ^2 ,

-մեքենաների քանակը՝ 208 կայանատեղի,

-բնակելի հարկերի կառուցապատման մակերեսը՝ 31440 մ^2,

-բնակարանների ընդհանուր թիվը՝ 393,

-տանիքում աստիճանավանդակների մակերեսը՝ 166 մ^2,

Մասնաշենքերն իրարից բաժանված կլինեն հակասեյսմիկ կարաններով: Բոլոր մուտքերում նախատեսված կլինեն մարդատար և բեռնատար 2 վերելակներ:

Համալիրի տանիքները նախատեսված են հարթ, կազմակերպված ներքին ջրահեռացումով: Արտաքին պատերը նախատեսվում է երեսպատել կախովի սալերով, առաջին հարկերի երեսպատումը՝ սրբատաշ բազալտե սալերով: Բնակարանների խոհանոցներից, սանհանգույցներից և լողասենյակներից օդափոխությունը նախատեսված է բնական՝ Ø100, Ø125 և Ø160 մմ տրամագծով օդատարներով, որոնք կբարձրանան նախատեսված հորանների մեջ՝ 3.0 մ բարձրությամբ: Ավտոկայանատեղիներում նախատեսված են մեխանիկական դրդմամբ ներմուծման և արտածման օդափոխության համակարգեր: Նախատեսվում է նաև ավտոհանգրվանների ծխահեռացման և հրդեհամարման ավտոմատ համակարգեր:

Շահագործման փուլում բնակելի համալիրն ապահովված է լինելու հաշմանդամների պահանջներին հարմարեցվող բազմակողմանի շարժական տարրերով, վերգետնյա և ստորգետնյա անցումներով, թեքահարթակներով:

Շենքերի էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրվող տեխնիկական պայմանի, իսկ գազամատակարարումը՝ համաձայն «Տրանսգազ» ՍՊԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի:

Շինարարական հրապարակը, ներառյալ շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը և այլն կազմակերպվելու են բացառապես նախատեսվող

գործունեության տարածքի սահմաններում: Շինարարական տեխնիկայի մուտքը դեպի տարածք նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող ճանապարհով: Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել լիցենզավորված շինարարական կազմակերպություններից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել հետևյալ սխեմայով.

- շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով,
- առաքումը կկազմակերպվի այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի շինաշխատանքների անընդհատությունը,
- առանձին ամրանային ձողերը և կմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կբերվեն անմիջապես շինարարական հրապարակ, որտեղ կիրականացվի դրանց տեղադրումն ու պահեստավորումը,
- հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով,
- փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումն ու վերանորոգումը նախատեսվում է իրականացնել ինչպես շինհրապարակում, այնպես էլ մեքենայացման բազայում:

Շինարարական աղբը շինհրապարակից պարբերաբար կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ ծածկով ապահովված բեռնատարներով: Կենցաղային աղբի կուտակման համար շինարարական հրապարակն ապահովված կլինի համապատասխան աղբամաններով: Շինարարության և շահագործման փուլում առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի մոտակա աղբավայր:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանման, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային կարիքների համար:

Շինարարական աշխատանքներում և բանվորական կազմի խմելու-կենցաղային նպատակների համար անհրաժեշտ ջուրը կվերցվի նախագծվող տարածքում առկա ջրագծից: Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի միացումը համապատասխան ցանցերին կիրականացվի «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի համաձայն:

Կատարված աշխատանքների ավարտից հետո տարածքի 60%-ը կկանաչապատվի: 3901,3մ^2 տարածքում կստեղծվեն կանաչապատ գոտիներ սիզամարգերի, տարբեր ծառատեսակների և ծաղկանոցի համադրմամբ, գեոցանցով ճանապարհ ու անցուղիներ:

Գործութնեության իրականացման տարածքում տեղադրված է համապատասխան տեղեկատվական ցուցանակ և մուտքն արգելող նշաններ, շինհրապարակը ցանկապատված է:

Շինարարական աշխատանքների ժամանակ շինհրապարակի տարածքում հատուկ միջոցառումներով պահեստավորված հողաբուսաշերտը, որը կազմում է շուրջ 1.000 խմ, նախատեսվում է օգտագործել կանաչ տարածքի բարեկարգման աշխատանքների համար:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

-փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով շինհրապարակի տարածքում պարբերական ջրցանումների իրականացում,

- օդի որակի չափումների իրականացում՝ ըստ անհրաժեշտության,

- շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը նախատեսված է հասցնել նվազագույնի և պահել կուտակված նյութերը հնարավորինս ծածկված վիճակում, փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար,

- փոշու քանակը նվազեցնելու նպատակով սահմանափակել մեքենաների արագությունը,

- աղմուկ առաջացնող աշխատանքներն իրականացնել օրվա ցերեկային ժամերին,

-օգտագործել խլացուցիչներով ապահովված մեքենաներ: Բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը,

-նախատեսվում է իրականացնել փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր զննում՝ վառելանյութի և յուղի հոսքը կանխելու համար,

-վտանգավոր նյութերն ու վառելանյութն պահել ծածկված, ապահով և բնական ճանապարհով օդափոխվող տարածքում՝ ապահովված անթափանց հատակով և պատնեշով:

-շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, հրշեջ հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

-կանոնավոր կերպով (ամենաուշը 2 օրը մեկ) շինհրապարակից հեռացնել շինարարական թափոններն ու աղբը՝ փոշու և շինաղբի երկարատև կուտակումն ու երթևեկության խոչընդոտները կանխելու համար:

Բնապահպանական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների համար նախատեսված է 470.000 ՀՀ դրամ:

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ կատարվող արտանետումների որակական և քանակական պարամետրերի ակնադիտական ստուգումներ՝ շինհրապարակ ստուգայցերի միջոցով,

- ըստ անհրաժեշտության՝ փոշու, աղմուկի, թրթռումների մակարդակների գործիքային չափումներ և վերլուծություն,

-աղմուկի, թրթռումների մակարդակների գործիքային ստուգում և վերլուծություն:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ բնակելի շենքերի կառուցման վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախագծով նախատեսված հարկայնության փոփոխությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Կոտայքի մարզպետարանը, որոնց կողմից ստացված կարծիքները հաշվի են առնվել: Ծրագրի իրականացման արդյունքում

շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- Անհրաժեշտ է հաշվետվությունում նշված հողամասի առնվազն 60%-ում ապահովել կանաչապատման տարածք: Կանաչապատումն իրականացնել համաձայն բարեկարգման և կանաչապատման նախագծի :
- Կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համաձայն՝ պահպանելով շինհրապարակի աշխատանքային անվտանգության կանոնները, բանվորների արտահագուստի և հիգիենայի պահանջները:
- շինհրապարակից ավտոմեքենաների ելքի ժամանակ անհրաժեշտ է լվանալ տեխնիկական միջոցների անվադողերը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համայնքապետարանի հետ համաձայնեցված:
-Կառուցապատման աշխատանքների ժամանակ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԷԼԻՏԱՐ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 17-րդ փողոցի թիվ 6/6 հասցեի հողամասում բազմաբնակարան շենքերի կառուցման նախագծի փոփոխության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Գոհար Մինասյան